«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ *Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումն աշխարհագրության դասավանդման ընթացքում*

ՀԵՂԻՆԱԿ *Լուսինե Ներսիսյան*

ԱՌԱՐԿԱ *Աշխարհագրություն*

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն

1. Ներածություն ……..……2-4
2. Գրական ակնարկ ……..6-8
3. Ի՞նչ է արժեհամակարգը ..…… 9-11
4. Աշխարհագրության դերը սովորողների արժեհամակարգի ձևավորման գործում...……..…… 12-19
5. Ուսուցիչը որպես մանկավարժական մշակույթի հիմնաքար և արժեհամակարգի ձևավորող……20-23
6. Եզրակացություն……24-27
7. Օգտագործված գրականություն……..28

Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես:

Ա. Դիստերվեգ

Ներածություն

Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա: Մշակույթը խիստ կապված է մարդու արժեհամակարգի հետ: Նեղ իմաստով՝ արժեքը մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է: Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաներից են՝ հավատն ու սերը: Հավատը ծնում է հույս և մղում մարդուն ապրելու, ստեղծելու, արարելու: Հավատը դառնում է կողմնորոշիչ մարդու կյանքի և գործունեության համար: Մարդիկ քանի դեռ ապրում են՝ հավատում են, քանի դեռ հավատում են՝ ապրում են: Հաջորդը սերն է: Ամեն մեկը յուրովի է սիրում: Սիրո մեջ մարդն ավելի պահանջկոտ է դառնում ինքն իր նկատմամբ, ձգտում ինքնակատարելագործման: Ահա թե ինչու սերը մշակութային և գեղեցիկ երևույթ է:

Մեր երկրում արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը: Իմ հետազոտական աշխատանքի թեման է «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը աշխարհագրություն առարկայի դասավանդման ընթացքում»: Թեման արդիական է, քանի որ կրթության նպատակը ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Արժեքային կրթությունն ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Թեմայի նպատակն է վեր հանել և վերլուծել այն խնդիրները, որոնք առաջանում են սովորողների մոտ առարկայի դասավանդման ժամանակ արժեհամակարգ ձևավորելու ընթացքում, քանի որ գաղտնիք չէ, որ այսօր հայ աշակերտի արժեքային համակարգը խարխլված է, իսկ արժեքները՝ խեղաթյուրված: Շատ շրջանավարտներ այսօր չունեն ամուր հոգևոր առանցք, պատկերացում չունեն բարոյական մոտիվների իսկական

արժեքի մասին, իրենց ուղին ընտրելիս մեծամասամբ նյութապաշտ են: Տվյալ հետազոտության օբյեկտ են հանդիսանում աշակերտները, քանի որ անհրաժեշտ է պարզ գիտակցել, որ դպրոցի նպատակը կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, ակտիվ, բարձր բարոյականության տեր, իր հայրենիքը սիրող մարդու դաստիարակությունն է: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ՝

• Գաղափար տալ հայ մշակույթի քաղաքակրթության, նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների առանձնահատկությունների մասին:

• Ծանոթացնել հայ ժողովրդի մշակութային արժեքներին և համամարդկային նվաճումներին:

• Ծանոթացնել հայրենի երկրի մշակույթին, պատմամշակութային կոթողներին:

• Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի՝ նրա բնածին ձգտումը:

• Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիք ստեղծող մարդկանց նկատմամբ:

• Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքերի մասին: Հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները:

Հանրակրթական դպրոցներում ուսուցանվող ցանկացած ուսումնական բնագավառ սովորողի արժեհամակարգի ձևավորման գործընթացում որոշակի մասնաբաժին ունի: Արդի տնտեսական բարդ պայմաններում դպրոցի համար այդ նպատակին հասնելը հեշտ չէ: Յուրաքանչյուր ուսուցչի, այդ թվում նաև աշխարհագրության ուսուցչի առաջ կանգնած է առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքային համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը:

Ամեն դարաշրջան իր խնդիրներն ու պահանջներն է թելադրում դպրոցին: Կրթական նոր քաղաքականությամբ կարևորվում է ուսուցչի դերը՝ որպես բովանդակության մշակողի, որպես նորարարի: Կրթակարգը ուսուցչի գործունեության ուղեկիցն է լինելու: Մեծանում է ուսուցչի պատասխանատվությունը: Նա իր մեթոդական պատրաստականությունն ու գիտելիքները հարստացնելու խնդիր ունի: Նա պետք է ապահովի պետության ակնկալիքները հանրակրթությունից: Սերունդները հաջորդում են սերունդներին և փոխվում է նրանց հետաքրքրությունների շրջանակը, նրանց

պահանջները, կրթության մասին վերաբերմունքը, փոխվում են իրենք, փոխվում է արժեքային համակարգը: Եվ ուսուցիչները, տեղեկատվության հոսքի աճին զուգընթաց, սկսում են նոր տեղեկությունները նորովի ուսուցանելը, կյանքում կիրառելի գիտելիքներով ու կարողություններով օժտված անհատ ձևավորելը:

Թեմայի արդիականությունը՝ առանձնապես կարևորելով հանրակրթության պետական կրթակարգում ընդգծված պահանջը կարողությունների, հմտությունների և որոշակի արժեքային համակարգի ձևավորման վերաբերյալ՝ կանգ ենք առել երեխաների ուսումնառության ընթացքում արժեքային համակարգի ձևավորման վրա: Այս հարցին հարկավոր է անդրադառնալ յուրաքանչյուր դասի նպատակները նշելիս ու ձևակերպելիս: Դրանք ընդհանուր բնույթ չպիտի ունենան, այլ խիստ որոշակի և հստակ:

Հետազոտության նպատակը՝ բացահայտել առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման գործընթացի էությունը:

Հետազոտության խնդիրները՝

1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,
2. վերլուծել դասապրոցեսը,
3. սահմանել արժեքային համակարգի ձևավորման ուղիները,
4. սերտորեն համագործակցել գործընկերների հետ:

Գրական ակնարկ

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանն անդրադառնալիս նպատակային ենք համարում նախ խոսել մանկավարժական մշակույթի, դրա ձևավորման և կիրառման մասին՝ գտնելով, որ ուսուցիչը նախ ինքը պետք է լինի այդ արժեքային համակարգի կրողը: Մանկավարժական մշակույթի խնդրի հետազոտության սկիզբը կարելի է համարել 20–րդ դարի 70–80–ական թվականները, երբ մանկավարժական մշակույթը սկսեց դիտարկվել որպես մշակույթի դրսևորում և հասարակության հոգևոր գործունեության որոշակի արտահայտություն: Ընդհանուր մշակույթը և մասնագիտական մշակույթը դիտարկվում են փոխադարձ կապի մեջ և փոխպայմանավորված են միմյանցով: Ուսուցչի մանկավարժական մշակույթը ձևավորվում և զարգանում է ընդհանուր մշակույթի հիման վրա և ունի իմացական – ճանաչողական, տեղեկատվական, հաղորդակցական գործառույթներ: Կրթության անձնակողմնորոշիչ հայեցակարգի ձևավորման արդյունքում սկսեցին ուսումնասիրվել մանկավարժական մշակույթի առանձին կողմեր՝ բարոյաէթիկական, հաղորդակցական: Ներկայումս «մանկավարժական մշակույթ» հասկացությունը ներառում է և՛ հոգեբանամանկավարժական գիտելիքները, և՛ մանկավարժի էթիկան, տակտը, մանկավարժական տեխնիկան, խոսքի մշակույթը, մեթոդական վարպետությունը, անձնային հատկանիշները: Այս մոտեցումը մեծ մասամբ պայմանավորված է նրանով, որ «մանկավարժ» հասկացությունը բովանդակում է մասնագիտությունը, սոցիալական դերը, գործունեության ձևը, անձի ուղղվածությունը:

Մանկավարժական մշակույթը ուսուցման և դաստիարակության գործընթացում դրսևորվում է որպես ամբողջական համալիր՝ ներառելով ոչ միայն ընդհանուր գծեր, այլև յուրաքանչյուր դասավանդողի անձնային հատկանիշները: Մանկավարժական մշակույթի տիրապետման գործընթացը բազմաշերտ և երկարատև գործընթաց է, որը պահանջում է անընդհատ ինքնակատարելագործում, ինքնակրթություն և ինքնազարգացում: Մանկավարժական մշակույթը մանկավարժական գործընթացի պայմաններում ընդհանուր մշակույթի յուրահատուկ դրսևորում է: Վ. Ա. Բարաբանշչիկովը մանկավարժական մշակույթի հիմնական բաղադրատարրեր է դիտարկում հոգեբանամանկավարժական գիտելիքների իմացությունը, բարոյական անբասիր կերտվածքի, մտավոր և հուզական հատկանիշների ներդաշնակ զուգակցումը, գիտական, մանկավարժական, հետազոտական ունակությունների համատեղումը,

մեթոդամասնագիտական հմտությունները, անընդհատ ինքնակատարելագործումն ու պահանջկոտությունը իր գիտելիքների նկատմամբ: Մի շարք հետազոտողներ, ելնելով այսօրվա իրականությունից, որում առկա են կրթության մարդասիրացման կայուն միտումներ, փորձ են անում տալ 21–րդ դարի ուսուցչի լիարժեք նկարագիրը: Վ. Ի. Անդրեևը ներկայացնում է երրորդ հազարամյակի ուսուցչի անձի մոդելը, որին հատկանշական են՝

- կրթվածությունը՝ գիտության և արվեստի տարբեր բնագավառների վերաբերյալ գիտելիքներ, առաջադիմական հայացքներ, բարձր բարոյականություն, գեղագիտական ճաշակի և հոգևոր մշակույթի զարգացվածություն, ստեղծագործական ինքնազարգացում,
- հոգևոր զարգացած ներաշխարհը՝ բարոյական բարձր հատկանիշները, սերը դեպի երեխաները, մասնագիտական կոչման և կյանքի նպատակների գիտակցումը, միջանձնային հարաբերությունների ներդաշնակությունը, դիմացինի հոգին թափանցելու, անդրադարձ կատարելու ունակությունը,
- ստեղծագործական հատկանիշները՝ նորի և ինքնատիպի որոնումը, ստեղծագործական գործունեության դրդապատճառների առկայությունը, իր և սաների մեջ ստեղծագործական ունակությունների զարգացումը, կյանքում, մասնագիտական գործունեության մեջ և մշակույթի աշխարհում ազատության զգացումը և ինքնորոշման ունակությունը,
- ազատությունը՝ անձնական և մասնագիտական պատասխանատվության բարձր մակարդակը, հոգևոր և նյութական արժեքների աշխարհում կողմնորոշվածությունը, որոշումներ ընդունելու ունակությունը, կենսական դիրքորոշումը,
- մարդասիրությունը՝ գթասրտությունը, այլոց օգնելու ունակությունը, համբերատարությունը, դիմացինին լսելու և նրա կարծիքը հարգելու կարողությունը, աշակերտների, նրանց ծնողների, գործընկերների հետ համագործակցելու ձգտումը,
- քաղաքացիական ակտիվությունը՝ շրջապատում և աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների գնահատումներում դատողությունների և վերլուծությունների օբյեկտիվությունը, հայրենասիրությունը, պարտքի և պատասխանատվության զգացումը, լավատեսությունը, իր և այլ ժողովուրդների պատմության ու մշակույթի իմացությունը,
- մրցունակությունը՝ ժամանակի ոգուն և մասնագիտական պահանջներին համապատասխանությունը, մանկավարժական առաջադիմական փորձի ուսումնասիրումը, այդ փորձի ստեղծագործաբար կիրառումը և զարգացումը,

հետազոտական աշխատանք կատարելու ունակությունը, մանկավարժական նորագույն տեխնոլոգիաներին տիրապետումը, աշխատանքում բարձր արդյունքների հասնելու ձգտումը,

- հաղորդակցումը մշակույթին՝ սոցիալ–մշակութային իրավիճակների վերաբերյալ գիտելիքներ, ժողովրդական ծեսերի, սովորույթների և ավանդույթների իմացություն, արվեստի տեսակների վերաբերյալ գիտելիքներ և խոր հետաքրքրություն, սովորողների մեջ մշակույթի նկատմամբ հետաքրքրության ձևավորում:

21–րդ դարի ուսուցչի՝ Վ. Ի. Անդրեևի կողմից առաջարկվող մոդելի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այդպիսի ուսուցիչը պետք է տիրապետի մանկավարժական բարձր մշակույթի, լինի արժեհամակարգի կրող: Մանկավարժը, որը տիրապետում է մանկավարժական մշակույթի բարձր մակարդակի, ունի սեփական ոճը, մանկավարժական անհատական ձեռագիրը, ձգտում է կերտել մանկավարժի օրինակելի կերպար: Մանկավարժական մշակույթը համամարդկային մշակույթի մի մասն է, որը միավորում է մանկավարժական պատմամշակութային փորձը և կարգավորում է մանկավարժական փոխներգործության ոլորտը: Մենք լիովին համաձայն ենք այն դիտարկմանը, որ մանկավարժական մշակույթի մակարդակը փոխադարձաբար կապված է կրթադաստիարակչական գործընթացի մակարդակի հետ: Բայց և այնպես, մեր կարծիքով, այդ անընդհատ գործընթացի մեջ է ամփոփված մշակույթի էությունը. մարդը (տվյալ դեպքում՝ ուսուցիչը) կախված է հասարակության ընդհանուր մշակույթի զարգացումից, բայց և հասարակության մշակույթի զարգացումը կախված է նրա յուրաքանչյուր անդամի անհատական մշակույթից: Ուսուցչի անձի մանկավարժական ուղղվածությունից (անձնային որակներ, մեթոդամասնագիտական պատրաստվածություն, մանկավարժական վարպետություն, հոգեբանամանկավարժական խորագիտություն, վարք, հաղորդակցում և այլն) են կախված մանկավարժական գործունեության իրականացման բնույթն ու արդյունավետությունը: Այդ գործոններն են պայմանավորում ուսուցչի ինքնակատարելագործումը, որը նրա հետագա գործունեության մեջ արտահայտում է վարքային դրսևորումներ մշակույթում, մանկավարժական մտածողության մեջ, որն էլ հանգեցնում է ուսուցչի կողմից մանկավարժական մշակույթի հստակ ըմբռնմանը և յուրացմանը: Ապագա ուսուցիչների մանկավարժական–մասնագիտական մշակույթին, արժեքային համակարգին նվիրված հետազոտություններում (Օ. Ա. Շկիլյովա, Ա. Է.

Կորոբովա, Մ. Վ. Նիկոլաևա և այլք) մանկավարժական մշակույթը դիտարկվում է որպես մանկավարժի մասնագիտության կարևոր հատկանիշ, ուսուցչի կողմից մարդկության մանկավարժական փորձի տիրապետման որոշակի աստիճան, մանկավարժական արժեքների անընդհատ զարգացող համակարգ, ուսուցչի գործունեության միջոց և վարքի արտահայտություն:

Ի՞նչ է արժեհամակարգը

Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը։ Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ և միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում։ Փորձենք ձևակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» ասածը։ Արժեքը երևույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել։ Վճարի «արժույթը» կարող է տարբեր լինել՝ տվայտանքներ, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք եւ այլն։ Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել։ Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը։ Առանց արժեքների կյանքը դատարկ է։ Հեշտ, առանց կորուստների և հաղթահարումների ապրելը երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձևավորման։ Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ։ Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի։ Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում։ Նորմերը տարբեր են քաղաքում և գյուղում։ Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, և որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձևավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի։ Զարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր։ Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ։ Ահա թե ինչու առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ «ազատությունները» իրենց հետ մեծ վտանգներ են բերում։

Հիմա անդրադառնանք բարոյականությանը։ Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է։ Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը և չի հակասում դրանց։ Անբարոյական է ամենը, ինչը դեմ է արժեքներին և բերում է դրանց քայքայման։ Օրինակ, ցանկացած հասարակության մեջ անբարոյական է դավաճանությունը միայն այն պատճառով, որ այն արժեզրկում է խոստումը։ Եթե խոստումն արժեք չլինի, մարդկանց

համակեցությունը կվերածվի մղձավանջի, քանի որ կվերանա փոխադարձ վստահությունը։ Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը և տարածվում անբարոյականությունը, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել։

Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը։ Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել։ Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել։ Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա և՛ ցավ, և՛ ուրախություն, ունենա թե դժվարություններ, թե հաղթանակներ։ Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք։ Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները։ Ուսուցչի ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են։ Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում։ Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները։ Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում։ «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»։

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Արժեքային համակարգի զարգացման արդիականությունը կայանում է նրանում, որ աշակերտների մոտ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները՝ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում աշակերտների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Դպրոցի դերն այսօր մատաղ սերնդին տրամադրելն է ոչ միայն ճանաչողական ոլորտում ավանդական գիտելիքներով և հմտություններով, այլև խաղաղության մշակույթի, մարդկային փոխհարաբերությունների մշակույթի վերաբերյալ արժեքային պատկերացումների ձևավորման գործում:

Մենք պետք է կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, այդ դեպքում մենք կունենանք աշխարհի ամենալավ և ամենաիմաստալից կրթական համակարգը:

Աշարհագրության դերը սովորողների արժեհամակարգի ձևավորման գործում

Հայաստանի Հանրապետությունում կրթությունը զարգանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթություն բոլորի համար» ծրագրի համատեքստում: Ըստ միջազգային այս կառույցի՝ կրթության առաքելությունն ամփոփվում է հետևյալ առաջնահերթ նպատակներում.

♦ լայն տեսահորիզոնով ստեղծագործ անձի դաստիարակություն՝ մտավոր, գեղագիտական և ֆիզիկական դաստիարակության միջոցով.

♦ աշակերտների այնպիսի դաստիարակություն, որը նրանց կդարձնի ազատ և անկախ, ունակ՝ ինքնուրույն քննարկելու և պատասխանատվությամբ կատարելու իրենց պարտականությունները.

♦դաստիարակություն՝ հիմնված հումանիզմի համընդհանուր սկզբունքների վրա՝ պահապանելով սեփական մշակույթը և հարգելով այլոց մշակույթների յուրահատկությունները:

Հենց այս գաղափարների վրա է տեղի ունենում աշխարհագրության դասավանդման դերի արդիականացումը: Առհասարակ կարող ենք առանձնացնել կարևորագույն խնդիրներից՝ դպրոցի դաստիարակչական ներուժի հզորացումը, սովորողների հանդեպ անհատականացված հոգեբանա-մանկավարժական մոտեցման ապահովումը: Դաստիարակությունն այսօր ընկալվում է որպես երեխայի և մեծահասակի նպատակաուղղված փոխգործակցություն, որը նախատեսում է նրանց համատեղ գործունեությունը՝ դաստիարակվողի կողմից հասարակության մշակութային արժեքների յուրացման և նրա անձի ինքնաիրացման նպատակով: Այս սահմանման մեջ ընդգծվում են դաստիարակության հետևյալ առանձնահատկությունները.

♦մանկավարժների և աշակերտների միջև սուբյեկտ-սուբյեկտ հարաբերության անհրաժեշտությունը.

♦ուղղվածություն դեպի երեխայի հոգևոր-բարոյական զարգացումը, մարդկության մշակութային արժեքների ըմբռնումը և դրանք որպես սեփական արժեհամակարգի մասի ձևավորումը.

♦զարգացման և ինքնաիրացման գործընթացում դաստիարակվողի կենսափորձի վրա հիմնվելը.

♦զգացմունքները անձի արժեքային-մոտիվացնող կողմ դարձնելը, որը խթանում է նրա գործունեությունը և վարքը.

♦դաստիարակվողի անհատական հաջողությունների նշանակությունը դաստիարակության արդյունավետացման մեջ։

Հոգևոր-բարոյական զարգացումը սոցիալականացման, արժեքային համակարգի ձևավորման գործընթացում անձի արժեքային-իմաստային ոլորտի հետևողականորեն ընթացող ընդլայնումն է և ամրակայումը, մարդու ընդունակության ձևավորումը՝ գնահատել և գիտակցորեն կանգնել ավանդական բարոյական նորմերի և բարոյական իդեալների հիմքի վրա ինքն իր, ուրիշ մարդկանց, հասարակության, պետության, հայրենիքի, ամբողջությամբ վերցրած՝ աշխարհի հանդեպ վերաբերմունքում և հարաբերություններում։

Կրթության մեջ աշխարհագրության մասնագետի կողմից սովորողների հոգևոր-բարոյական դաստիարակության և սոցիալականացման նպատակն է բանիմաց, ստեղծագործ, բարձր բարոյական ՀՀ քաղաքացու ձևավորմանը և զարգացմանը նպաստելը։ Նպատակը մասնատվում է խնդիրների, որոնք թույլ են տալիս կառուցել դաստիարակության ռազմավարությունը և ապահովել նրա արդյունավետությունը։ Դպրոցի սովորողների դաստիարակության և արժեքային համակարգի ընդհանուր խնդիրները դասակարգված են առանձին ուղղությունների, որոնցից յուրաքանչյուրը քանի որ սերտորեն կապված է մյուսների հետ, բացահայտում է ՀՀ քաղաքացու հոգևոր-բարոյական զարգացման մի էական կողմ.

♦ քաղաքացիա-հայրենասիրական դաստիարակություն,

♦ հոգևոր և բարոյական դաստիարակություն,

♦ստեղծագործականության և աշխատանքի հանդեպ դրական վերաբերմունքի դաստիարակություն,

♦ մտավոր դաստիարակություն,

♦ առողջարարական դաստիարակություն,

♦ սոցիո-մշակութային և միջմշակութային դաստիարակություն,

♦ ընտանեկան արժեքների դաստիարակություն,

♦ հաղորդակցական մշակույթի ձևավորում,

♦ էկոլոգիական դաստիարակություն։

Այս խնդիրների բացահայտման և լուծման ուղիների միջակայքում անգնահատելի մեծ է աշխարհագրության դերը:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավականին լայն շառավղով: Առավելապես ընդունված է, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, այդ թվում՝ աշխարհագրությունը: Աշխարհագրությունը բոլոր երկրների դպրոցների առանցքային հանրակրթական առարկաներից է: Այն միակ առարկան է, որ տալիս է Երկրի՝ որպես մարդկության մոլորակի և նրա վրա մարդկային հասարակության տարածքային կազմակերպման մասին անմիջական պատկերացում: Դա պայմանավորված է գիտական գիտելիքների համակարգում աշխարհագրության տեղի և ներքին կառուցվածքի յուրօրինակությամբ:

Աշխարհագրությունն է, որ Երկրի վրա ընթացող բնական և հասարակական երևույթների զարգացման օբյեկտիվ օրենքների ու օրինաչափությունների օրինակով ձևավորում է սովորողների մատերիալիստական աշխարհայացք, երևույթների միջև եղած կապերի պատճառականություն և աշխարհի միասնականության համոզմունք: Աշխարհագրությունն է, որ արդի աշխարհը իր զարգացման օրինաչափություններով և օրեցօր բարդացող հիմնախնդիրներով ճանաչելի է դարձնում սովորողին, ծանոթացնում է նրան տարբեր երկրների սովորություններին, նյութական և հոգևոր մշակույթին: Աշխարհագրությունն է, որ սովորողին մղում է ճանաչելու սեփական հայրենիքը, հասկանալու և գնահատելու նրա տեղն ու դերը հարափոփոխ աշխարհում, ընկալելու այն փոխադարձ կապերի բնույթն ու առանձնահատկությունները, որոնք գոյություն ունեն մի կողմից՝ մարդու և շրջակա միջավայրի, մյուս կողմից՝ Հայաստանի և նրա հեռու ու մոտիկ հարևանների միջև, և դրանով իսկ նպաստում է նրա ինչպես ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացմանը, այնպես էլ էկոլոգիական կուլտուրայի ու քաղաքական կուլտուրայի ձևավորմանը:

Աշխարհագրությունը երիտասարդ սերնդի արժեքային համակարգի ձևավորման և դաստիարակության գործընթացում աշխարհայացքային և ընդհանուր մշակութային

կարևոր դերակատարում ունենալուց բացի, կոչված է սովորողին հաղորդելու նաև կիրառական նշանակության գիտելիքներ ու հմտություններ: Մեծ է աշխարհագրության դերը սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործում: Վերջինս հատուկ կարևորվել է հանրակրթության արդի բարեփոխման ռազմավարական խնդիրներում:

Դպրոցական աշխարհագրության բովանդակության հիմքում ընկած են բնության և հասարակության օրենքների օբյեկտիվ իրողությունն ու ճանաչելիությունը, բնության և հասարակության փոխադարձ կապը, տարածաժամանակային փոխազդեցությունները և դրանց առաջընթաց զարգացումը: Դպրոցական յուրաքանչյուր դասընթաց յուրովի է բացահայտում աշխարհահայացքային այդ գաղափարները՝ ելնելով իր առանձնահատուկ բովանդակությունից: Հետազոտության իրենց առարկաներից՝ նեղ իմաստով օբյեկտներից ելնելով, և՛ բնական, և՛ հասարակական աշխարհագրությունն ունի գիտական ճիշտ աշխարհահայացք ձևավորելու, քանի որ դրանք ընդգրկում են բնական և հասարակական երևույթների լայն շրջանակ, ինչպես նաև բնական միջավայրի և հասարակության միջև գոյություն ունեցող կապերը տեսնելու, սովորելու և հասկանալու հնարավորություններ: Աշխարհագրական գիտելիքների շնորհիվ ամրապնդվում է այն համոզմունքը, որ աշխարհը ճանաչելի է, նյութական, միասնական, ամբողջական, բնության ու հասարակական կյանքի բաղադրիչները գտնվում են սերտ կապի մեջ, այդ բաղադրիչներն էլ առանձին-առանձին ու միասնաբար անընդհատ զարգանում և փոփոխվում են ժամանակի ու տարածության մեջ:

Աշխարհագրության միջոցով տնտեսության, դրա ճյուղերի ուսումնասիրումն աշակերտներին հնարավորություն է տալիս ծանոթանալու աշխատանքային տարբեր գործունեության ոլորտներին, զանազան մասնագիտություններին, ինչը հնարավորություն է տալիս դպրոցականներին որոշելու սեփական հետաքրքրություններն աշխատանքային գործունեության ընտրության ժամանակ:

Մեծ է դպրոցական աշխարհագրության դերը բարոյագեղագիտական արժեքների ձևավորման գործում: Աշխարհագրական-հայրենագիտական աշխատանքները բնության գրկում ամրապնդում են աշակերտների առողջությունը, իսկ աշխատանքների ընթացքում հանդիպող դժվարությունների ու խոչընդոտների հաղթահարումը կոփում է նրանց բնավորությունը և առողջությունը՝ միաժամանակ զարգացնելով ինքնուրույն գործունեություն ծավալելու որոշակի հմտություններ: Այդ աշխատանքները լայն հնարավորություն են ընձեռում սովորողների մեջ դաստիարակելու ընկերասիրության,

մարդասիրության, համակեցության, փոխադարձ հարգանքի, իրար օգնելու մարդկային բարձրարժեք գծեր, ինչպես նաև համատեղ նախագծեր կազմելու, հետազոտություններ իրականացնելու կարողություններ։

Դպրոցական աշխարհագրությունը իր ուրույն դերն է կատարում սովորողների այնպիսի ունակությունների զարգացման գործում, ինչպիսիք են դիտողականությունը, երևակայությունը, տրամաբանությունը, խոսքը, հիշողությունը։ Դպրոցականների տարաբնույթ դիտարկումներն աշխարհագրությունից հնարավորություն են տալիս սովորողներին մի կողմից երևույթները տեսնել համալիր ձևով, մյուս կողմից՝ դրանք նպաստում են նրանց դիտողականության զարգացմանը։ Այս առումով արժեքավոր են երկարատև դիտարկումները, որոնք շրջակա բնությունը և մարդու տնտեսական գործունեությունն ուսումնասիրելու ժամանակ հնարավորություն են տալիս համապատասխան հետևություններ կատարել կլիմայի, գետերի ռեժիմի, հողաբուսական ծածկի, մարդուն շրջապատող բնության ռացիոնալ օգտագործման և պահպանության առանձնահատկությունների վերաբերյալ։

Դպրոցականների երևակայության զարգացման կարևորագույն միջոցներ են համարվում ուսուցչի պատկերավոր խոսքը, երևակայական ճանապարհորդությունները քարտեզներով և այլն։ Քարտեզների միջոցով տարբեր տարածքների աշխարհագրական բնութագրերի կազմումը, ստեղծագործական բնույթի աշխատանքների կատարումը սովորողների մոտ զարգացնում են տրամաբանական մտածողության այնպիսի կողմեր, ինչպիսիք են ապացուցելիությունը, դատողության հատկությունը, ճիշտ մտահանգումներ կատարելու կարողությունները։

Մտածողության զարգացումը կապված է աշակերտի խոսքի զարգացման հետ։ Ծանոթանալով մեծ թվով աշխարհագրական անունների, թվերի ու փաստերի հետ՝ զարգանում է աշակերտների հիշողությունը։ Տարրական դպրոցն ավարտողը պետք է ճանաչի իր հայրենիքը, թվարկի նրա խոշոր քաղաքները, լճերը, գետերը, լեռները, իմանա իր բնակավայրի աշխարհագրական առանձնահատկությունները։ Նա աշխարհագրական գիտելիքների հիման վրա կարող է ձեռք բերել հետևյալ կարողություններն ու հմտությունները.

- դիտարկել և նկարագրել բնության մեջ կատարվող պարբերական փոփոխությունները,
- օգտվել որոշակի սարքերից (կողմնացույց, ջերմաչափ, ճնշաչափ),
- խորհրդակցել համադասարանցիների հետ,

- համատեղ մշակել և իրականացնել բնապահպանական պարզ միջոցառումներ։

Աշակերտն աշխարհագրական գիտելիքների շնորհիվ պետք է սիրի բնությունը, գնահատի բնության գեղեցկությունը, հոգատար վերաբերմունք ունենա կենդանական և բուսական աշխարհի նկատմամբ, ճանաչի մարդ-բնություն կապը, գիտելիքներ ունենա օրգանիզմի և շրջակա միջավայրի փոխազդեցության մասին, ճանաչի Հայաստանի բնությունը և նրա յուրահատկությունները։ Սովորողը պետք է գիտակցի բնական պաշարների սահմանափակությունը, մերժի բնության նկատմամբ սպառողական հոգեբանությունը, գիտակցի իր դերն ու պատասխանատվությունը բնական միջավայրի պահպանման գործում։ Պետք է ընդհանուր գծերով ճանաչի իր հայրենիքը, իմանա Հայաստանի և նրա հարևան պետությունների տեղը քարտեզի վրա, պատկերացում ունենա մարդկանց միջև հավասարություն, արդարություն, բարեկամություն և խաղաղություն հաստատելու անհրաժեշտության մասին։ Աշակերտը պետք է ունենա ազգային ինքնագիտակցություն, կարևորի պետականության դերը հայապահպանության և Հայաստանի զարգացման գործում, գիտակցի կրթվելու, ամբողջ կյանքի ընթացքում ինքնակրթությամբ զբաղվելու կարևորությունը։

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրներ։ Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում։

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում։ Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում։ Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը։

Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին

ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ»:

Յուրաքանչյուր ուսուցիչ ձգտում է անթերի դաս անցկացնել, սակայն միշտ չէ, որ դա հաջողվում է: Դա կախված է մի շարք գործոններից.

1) սոցիալական պատվերով պայմանավորված՝ դասերին ներկայացվող պահանջների գիտակցումից և կատարումից

2) ուսումնական գործընթացի օրինաչափություններից

3) դեպի ազգային արժեքներ ուսուցման կողմնորոշումից

4) նպատակներից, ինչպես նաև ուսումնադաստիարակչական և զարգացնող խնդիրների լուծումից:

Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը, դաստիարակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ և հետևողական իրագործումը: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:

Աշխարհագրության ուսուցման գործընթացում, ընդհանրապես դպրոցական պրակտիկայում հանդիպում ենք տարբեր տիպի դասերի, որոնք ունեն իրենց ուսումնադաստիարակչական նպատակը: Դասերի տիպերի դասակարգման շատ տարբերակներ ունեն ընդհանուր բնույթ: Դրանց հիմքում ընկած են հիմնական նպատակներ՝ պատրաստի գիտելիքների յուրացում, կրկնության միջոցով դրանց ամրապնդումը, գիտելիքների կիրառում պրակտիկայում, սովորողների ձեռք բերած գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ստուգում, կարողությունների ու

հմտությունների ձևավորման նպատակով կատարվող վարժություններ։ Այդ տիպի դասերից են ներածական դասը, խառը կամ համակցված դասը, նոր գիտելիքների ուսումնասիրման դասը, զրույց-դասը, գիտելիքների ստուգման և գնահատման դասը, էքսկուրսիոն դասերը, սեմինարների դասը և այլն։ Թվարկվածներից առավել գործածականը և արդյունավետը, իմ համոզմամբ, խառը (համակցված) դասն է, որն ընդգրկում է ուսուցման գործընթացի շատ կողմեր՝ նոր գիտելիքների հաղորդում և յուրացում, ամրապնդում, ընդհանրացում, ստուգում և գնահատում։ Դասի այս տիպն ամենատարածվածն է հատկապես ցածր դասարաններում, որտեղ սովորողների ուշադրությունն անկայուն է, նրանք չեն կարողանում երկար ժամանակ զբաղվել միևնույն բնույթի աշխատանքով, կարիք են զգում աշխատանքի բովանդակության, ուսուցման ձևերի ու մեթոդների հաճախակի փոփոխման, այլապես կկորցնեն հետաքրքրությունը դասի նկատմամբ։ Դասի այս տիպը կարող ենք կիրառել ոչ մեծ ուսումնական թեմաներ ուսումնասիրելիս։

Ուսուցիչը որպես մանկավարժական մշակույթի հիմնաքար և արժեհամակարգի ձևավորող

Մարդկության կողմից ստեղծված նյութական և հոգևոր արժեքներն իրենց արտացոլումն են գտնում կրթության և դաստիարակության բովանդակության մեջ, մանկավարժի ստեղծագործական գործունեության միջոցներում: Մանկավարժական մշակույթը ընդհանուր մշակույթի մի մասն է, այդ մասին ժամանակին գրել են Յան Ամոս Կոմենսկին, Մ. Վ. Լոմոնոսովը, Կ. Դ. Ուշինսկին: Ըստ Վ. Ա. Սուխոմլինսկու՝ մանկավարժական մշակույթի մեջ պետք է առանձնացնել հետևյալ բաղադրիչները՝

- մարդասիրությունը, աշակերտի մտքին և սրտին անմիջականորեն դիմելը,
- իր առարկայի խոր իմացությունը, մանկավարժական գործընթացի բոլոր նրբություններին տիրապետելու ունակությունը, մանկավարժի հուզականությունը, զգայունակությունը, զգացմունքայնությունը,
- գործունեության տարբեր ձևերում երեխայի անհատական, տարիքային, հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման մեթոդների հարստությունն ու բազմազանությունը,
- մանկավարժի ստեղծագործական լաբորատորիայի առկայությունը,
- մանկավարժի գործունեության մեջ հոգեբանական ամուր հիմքը,
- ուսուցչի լեզվական մշակույթը, խոսքի մատչելիությունը, տրամաբանությունը, դիտողականությունը, ինքնավերահսկումը, արտահայտչամիջոցների հղկվածությունը:

Մանկավարժի վարքը ուսուցչի անհատական մանկավարժական մշակույթի դրսևորումն է: Մանկավարժական մշակույթը այն հիմնաքարն է, որի վրա ձևավորվում է ուսուցչի մանկավարժական վարպետությունը: Մանկավարժական մշակույթի կառուցվածքը բազմաշերտ է և ներառում է բարոյական տեսանկյուններ, անձի հոգևոր ներաշխարհի դրսևորման միջոցները հաղորդակցման և գործունեության մեջ: Ապագա մանկավարժի արտաքին և ներքին մշակույթի փոխադարձ կապը նպաստում է մասնագիտական իդեալի վերաբերյալ պատկերացումների որոշակիացմանը, այդ իդեալին հասնելու ուղիների որոնմանը: Մանկավարժական մշակույթը մի կողմից ըմբռնվում է որպես ուսուցչի հոգևոր - բարոյական մշակույթ, մանկավարժական գործունեության մշակույթ (նպատակ – միջոցներ – արդյունք - վերլուծություն), մտածողության,

ստեղծագործական մշակույթ, գործունեության մեջ ինքնարտահայտման և անդրադարձ կատարելու ունակության, երեխային հոգեբանամանկավարժական աջակցության մշակույթ:

Այսպիսով՝ մանկավարժական մշակույթը ձևավորվում և զարգանում է ընդհանուր մշակույթի հիման վրա: Այն հոգեբանամանկավարժական համոզմունքների և վարպետության, ընդհանուր զարգացման և մասնագիտական - մանկավարժական հատկանիշների միասնություն է: Միաժամանակ մանկավարժական մշակույթը տարբեր «մշակույթների» իմացական, հաղորդակցական, մեթոդաբանական, խոսքի զարգացման և այլն, պարզագույն հանրագումար չէ: Դա ամբողջական կրթություն է, որը դրսևորվում է մի կողմից՝ որպես ուսուցչի մանկավարժական վարպետության բաղադրիչ, մյուս կողմից՝ որպես մանկավարժական վարպետության ձևավորման գործընթացում ձեռք բերված արժեք:

Հասարակության որակը կախված է զարգացած, կրթված անհատներից, որոնք պետք է կազմեն հասարակության բովանդակային կորիզը, պետք է պատասխանատու և ծանրակշիռ լինեն ոչ միայն իրենց մասնավոր կյանքի ու կյանքի որակի համար՝ անհաղորդ ու անտարբեր մնալով հասարակությանը և ազգային խնդիրներին, այլև պետք է լինեն ակադեմիական հիմնարար գիտելիքներով զինված, մեր ժամանակների նորագույն ձեռքբերումներին քաջատեղյակ, ազգային գործոնն առաջ մղող, մարդկային բարձր արժանապատվությամբ և շրջահայեցությամբ օժտված առաջնորդներ, որոնք կհամալրեն հանրային կյանքի բոլոր բնագավառները:

Բարեփոխությունների անշրջելի ընթացքը ժամանակակից կրթական համակարգի առանձնահատկությունն է: Կրթական ոչ մի համակարգ չի կարող արդյունավետ գործել համաշխարհային կրթական գործընթացներից դուրս և այդ ամենից մեկուսացած: Գիտության, տեխնիկայի աննախադեպ առաջընթացը նոր մոտեցումներ ու պահանջներ է սահմանում նաև կրթամշակութային ոլորտի համար:

Օրվա հրամայականն են դառնում ուսուցման նոր մեթոդների որոնման, կրթության բովանդակության նորացմանը միտված աշխատանքները: Անընդհատ փոփոխվող աշխատանքային միջավայրում, արագորեն վերակազմավորվող աշխատաշուկայում ավելի ու ավելի է կարևորվում որակյալ ուսուցման և որակյալ մասնագետների պահանջը, ինչը բնականորեն նպաստում է հանրակրթության դերի բարձրացմանը: Կրթությունը դառնում է հասարակության զարգացման խթանիչ ուժ՝ միաժամանակ ապահովելով նաև

մարդկային համակեցության ներդաշնակ պայմաններ հասարակության բոլոր շերտերի համար: Հանրակրթության ոլորտում տեղի ունեցող համակարգային փոփոխությունները, որոնք պայմանավորված են համաշխարհային զարգացումներով, ենթադրում են ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և վերաիմաստավորում, կրթության ոլորտում ազգային առանձնահատկությունների և միջազգային փորձի արդյունավետ համադրում: Այս 2 պայմաններում արդեն կարևոր խնդիր է դառնում պետական-ազգային մտածողություն ունեցող և կյանքի արագընթաց զարգացումներին հաղորդակից անհատի ձևավորումը, ինչի իրականացմանն էլ պետք է ուղղված լինի կրթական քաղաքականությունը: Բայց նախ և առաջ ուսուցիչն ինքը պետք է լինի այդպիսին: Անդրադառնանք ուսուցչի կերպարին և դերին:

Ուսուցչի համար կարևոր է իր պրակտիկ գործունեության վերլուծության, կատարելագործման, ինքնազարգացման, շարունակական կրթության համար գիտամանկավարժական տեսական գիտելիքներից օգտվելու կարողությունը:

Տեսությունը, որը չի հիմնվում պրակտիկայի վրա, անհիմն է, և կրում է մտահայեցողական բնույթ: Մանկավարժական հետազոտությունը ինքնանպատակ չէ,այն պետք է արտացոլի առաջավոր փորձը, ստուգվի պրակտիկայում և նպաստի ուսումնադաստիարակչական խնդիրների լուծմանը: Առանց պրակտիկ գործունեության խոր և համակողմանի վերլուծության անհնար է նախանշել ուսումնադաստիարակչական գործընթացի զարգացման ուղիները:

Մանկավարժական մեթոդաբանության մեջ կարևոր է հիմնախնդրի նկատմամբ ստեղծագործական մոտեցման սկզբունքը: Փորձը ցույց է տալիս,որ մանկավարժական շատ հիմնախնդիրներ հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է դրսևորել ստեղծագործական մտածողություն: Հետազոտության ընթացքում պետք է որոնել նոր տվյալների, երևույթների փաստարկված բացատրություն, համալրել և ճշտել առկա տեսակետները, չվախենալ գիտական համարձակության դրսևորելուց: Հետազոտողի վարպետությունը այն է, որ ուղիներ և միջոցներ գտնի երևույթների էության մեջ թափանցելու համար, չդրսևորելով սուբյեկտիվություն, սրա հիմքը մարդկանց պրակտիկ գործունեությունն է: Մանկավարժական հետազոտության արդյունավետությունը մեծապես կախված է մանկավարժական գործընթացների ու երևույթների համակողմանի ուսումնասիրությունից:

Որպեսզի հասնենք ցանկալի արդյունքի սահմանենք որոշակի քայլարշավ.

1. ստեղծել բարյացակամ միջավայր,
2. ապահովել, որ բոլորի ձայները լսելի լինեն,
3. ընտանիքներին ընձեռել մեզ հետ համագործակցելու հնարավորություն,
4. առաջնորդվել մեր աշակերտների անհատական կրթական կարիքներով,
5. աջակցություն ստացնալ դպրոցի տնօրենից՝ համագործակցել կոլեգաների հետ, մասնակցել դասապրոցեսներին, փոփոխել դասացուցակը
6. համատեղ դասավանդում սկսել փոքր քայլերից. նախ վերցնել մեկ առարկա՝ աշխարհագրություն, հետո աստիճանաբար, սովորողների համար աննկատ կերպով նաև համատեղել մնացած առարկաները դասավանդող ուսուցիչների ջանքերը։

Եզրակացություն

Այսպիսով, կրթությունը պետք է ուղղված լինի անհատի ամբողջական զարգացմանը, որը պատասխանատու է, ինչպես նաև զգայուն է ուրիշների կարիքների նկատմամբ: Տեղին է ասվում, որ կրթության նպատակը մարդուն իր ներսում կարգուկանոնով դարձնելն է, ինչպես նաև ընտանիքի, հասարակության, ազգի և աշխարհի կանոնավոր միավորը: Բայց այսօրվա արագընթաց աշխարհում, որտեղ հասարակության աննախադեպ փոփոխություններ են տեղի ունենում, մենք կլանել ենք դարաշրջանի առանձնահատկությունները և մեծ չափով շեղվել ենք ճիշտ ուղուց: Խոր արմատացած արժեքները, գաղափարները, վերաբերմունքը, հույսերն ու ձգտումները բոլորն էլ ենթարկվել են ծովային փոփոխության: Երեխաները նույնպես անմասն չեն մնացել: Ներկա սցենարում, երբ մարդու բարոյականությունը նվազում է, երիտասարդ մտքերը դաստիարակելը և նրանց մեջ արժեքներ սերմանելը ծնողների, ինչպես նաև ուսուցիչների պարտականությունն է: Քանի որ երեխաները իրենց օրվա մեծ մասն անցկացնում են ուսումնական հաստատություններում, հրամայական է դառնում, որ ուսուցիչները ստանձնեն իդեալական միջավայր ստեղծելու պատասխանատվությունը, որպեսզի կարողանան վերականգնել որակական արժեքները: Երիտասարդների մեջ արժեքներ սերմանելը պետք է արվի եռանդով: Երեխաները դիտում և սովորում են իրենց ուսուցիչներից: Նրանք ոչ միայն ընդօրինակում են նրանց, այլև ներծծում են նրանց վարքի ձևը: Այսպիսով, ուսուցիչները պետք է դառնան օրինակելի իրենց աշակերտների համար: Նրանք պետք է ինտեգրեն արժեքները ուսումնական ծրագրի հետ, ընդգծեն առօրյա խնդիրների դրական կողմերը և արժեքներ սերմանեն երեխաների մեջ՝ որդեգրելով անուղղակի և բարեկամական մոտեցում: Քանի որ բարոյականությունն ու արժեքները չեն կարող պարտադրվել, ուսուցիչները պետք է քննարկեն նորությունները և միջադեպերը, ստեղծեն այնպիսի միջավայր, որ երեխաներին դրդեն մտածել, վերլուծել և սովորել տարբերել ճիշտն ու սխալը: Համեմատած արտաքին աշխարհի հետ, որտեղ երեխաները չափազանց շատ բան ունեն, որոնցից կարող են շեղվել, ուսուցիչները կարող են առանցքային դեր խաղալ իրենց աշակերտների հետաքրքրությունների և կարողությունների բացահայտման գործում, ինչպես նաև ոգեշնչել և դրդել երիտասարդ մտքերին դեպի ճիշտ ուղղություն: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես

պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում ունենալով շարունակական բնույթ:

- ✓ Ուսուցչի համար կարևոր է իր պրակտիկ գործունեության վերլուծության, կատարելագործման, ինքնազարգացման, շարունակական կրթության համար գիտամանկավարժական տեսական գիտելիքներից օգտվելու կարողությունը:
- ✓ Փորձը ցույց է տալիս, որ մանկավարժական շատ հիմնախնդիրներ հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է դրսևորել ստեղծագործական մտածողություն:
- ✓ Արժեքային համակարգի ձևավորման գործում բացառիկ է բարոյական դաստիարակության դերը:
- ✓ Բարոյական զարգացման հիմքը երեխաների մեջ հումանիստական հարաբերությունների ու փոխհարաբերությունների ձևավորումն է:
- ✓ Դպրոցականների մեջ արժեքային համակարգի ձևավորումը տեղի է ունենում բոլոր առարկաների դասավանդման ընթացքում:
- ✓ Սեփական գիտելիքների հարստացումը, կարողությունների և հմտությունների դրսևորումը և կոլեգաների հետ համագործակցությունը բացառիկ դեր ունեն սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման ժամանակ:
- ✓ Միայն այն դեպքում կարելի է արդյունավետ և նպատակասլաց ղեկավարել սովորողների զարգացումը, երբ տարվող աշխատանքները կառուցված են նրանց տարիքային առանձնահատկությունների իմացության և դրանց հաշվառման հիման վրա:
- ✓ Աշխարհագրության դասին ցանկալի արդյունքի հասնելու համար ուսուցիչը պետք է կարողանա դասը կազմակերպել ժամանակակից աշխարհագրության և մանկավարժության ձեռքբերումները հաշվի առնելով և համադրելով:

- ➢ Աշակերտը ստացած աշխարհագրական գիտելիքների շնորհիվ պետք է սիրի բնությունը, գնահատի բնության գեղեցկությունը, հոգատար վերաբերմունքը ունենա կենդանական և բուսական աշխարհի նկատմամբ (արժեքային համակարգ):
- ➢ Դպրոցն ավարտող աշակերտը որպես արժեքային համակարգի տարրեր պետք է պարտավորություն կրի բնության, հասարակության, սեփական անձի հանդեպ, ըմբռնի բնության հետ ներդաշնակ ապրելու անհրաժեշտությունը:

- Դպրոցականների երևակայության զարգացման կարևորագույն միջոցներն են համարվում ուսուցչի պատկերավոր խոսքը, երևակայական ճանապարհորդությունները քարտեզներով, առանձին տարածքների աշխարհագրական բնութագրերի կազմումը համապատասխան քարտեզներով և նկարներով:

Աշխարհի պետությունների մեջ մեր փոքրիկ Հայաստանի Հանրապետությունը համայն հայության հայրենիքն է, քանի որ բացի մեր բուն հայրենիքից ունենք նաև սփյուռք: Այդ է պատճառը, որ հատկապես հայ աշակերտի, հայ մարդու, հայի արժեհամակարգը պետք է տարբերվի աշխարհի մյուս ժողովուրդների մտածելակերպից: Այդ պատճառով, Հայաստանի աշխարհագրության խորը իմացությունը յուրաքանչյուր հայի նույնքան անհրաժեշտ է, որքան մայրենի լեզվի, հայոց պատմության և մշակույթի իմացությունը: Եթե ուսուցիչը լավ է սերմանում այդ գիտելիքը, ապա այդ իմացությունը կօգնի յուրաքանչյուր աշակերտի ճիշտ գնահատել նաև մեր հայրենիքի զարգացման հեռանկարները և իրական հնարավորությունները, ճիշտ կողմնորոշվել համաշխարհային և տարածաշրջանային նշանակության իրադարձություններում, հասկանալ մեզ ներկայացվող մարտահրավերները և պատկերացում ունենալ դրանց դիմակայելու ուղիների մասին: Իսկ դա կարող ենք իրականացնել միայն խորապես ճանաչելով և արժանվույն գնահատելով Հայաստան աշխարհը, սիրելով այն և նվիրվելով նրա հզորացման ու բարգավաճման վեհ նպատակին:

Այսպիսով, ամփոփելով իմ հետազոտական աշխատանքի թեման՝ եկա այն եզրակացության, որ պետք է դաստիարակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվության ու հպարտության, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում: Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին ու Հայոց բանակին ծառայելը պատվի գործ է: Առաջարկում եմ հասնել այն բանին, որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման, հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին, որպեսզի կարողանանք հպարտությամբ ծառայել նրա բարօրությանը: Քանզի, ինչպես ասել է Ռաֆֆին՝

«Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարտապես սիրել այն»:

Եվ երբեք չպետք է մոռանալ, որ հայության միակ հայրենիքը ավետյաց երկիր Հայաստանն է: Համաձայն կրթության փորձագետ Սերոբ Խաչատրյանի, կրթության ոլորտում կա մի կարևոր բաղադրիչ, որն անտեսված է համարվում. դա ուսուցչի կողմից ձեռք բերված ուսուցման դիտարկումներից և հնարներից զատ, ամենա կարևոր որակներից մեկը հանդիսացող մտածելու կարողությունն է: Այսօրվա ուսուցիչը տեղեկատվություն փոխանցողից, ինչը բնորոշ էր ավանդական կրթությանը, պետք է վերածվի «ճարտարապետի», ով կարող է ստեղծել սովորող և, ինչպես ասել է Ս. Խաչատրյանը, «Եթե ինձ հարցնեն, թե որն է կրթության նպատակը, կասեմ՝ սովորող ստեղծելը: Եթե դպրոցական կրթության վերջում չունենք սովորող, այլ մարդ, որի համար այդ գործընթացը դարձել է ամենօրյա գործունեություն՝ անկախ գիտելիքների պաշարից, պարտված ենք»:

Արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Յուրաքանչյուր սերունդ ունի իր կատարելատիպը, ըստ որի էլ չափվում են արժեքներն ու նպատակները: Սերունդները օղակ են անցյալի ու ապագայի միջև, և ապահովվում է տվյալ ժամանակաշրջանին բնորոշ արժեքների հաջորդականությունը և փոխանցումն հետագա սերունդներին:

Գալով եզրահանգման՝ պետք է հավաստեմ,որ յուրաքանչյուր ուսուցիչ դասարան մտնելուց առաջ պետք է նախ պետական չափորոշիչի համաձայն կազմակերպի իր օրվա պլանը, որը կբխի իր առջև դրված նպատակներից և խնդիրներից, որոնք կհանգեցնեն արժեհամակարգի բարձրագույն արժեքների ձևավորմանը: Ելնելով վերոհիշյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, Կրթակարգ, ԿԱԻ, Երևան, 2004թ
2. Ամիրջանյան Ա., Ա. Ս. Սահակյան «Մանկավարժություն» - Երևան , 2005
3. Կովալյով Ն. Ե. «Մանկավարժության տեսություն» - Երևան, 1977
4. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ.Ա. «Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում» - Երևան, 1987
5. Մուդրիկ Ա. Վ. «Դպրոցականի անձը և դաստիարակությունը կոլլեկտիվում» - Երևան, 1986
6. Մանասյան Ն. «Հանրակրթության արժեքային համակարգը» - «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ., N1/2

3. Սուխոմլինսկի Վ.Ա. «Սիրտս նվիրում եմ երեխաներին» - Երևան, 1977

4. Օլշաննիկովա Ա.Ե. «Հույզեր և դաստիարակություն» - Երևան, 1985

7. «Հանրակրթական դպրոցի «Աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրություն» առարկայի չափորոշիչներ և ծրագրեր» - Երևան, 2008
8. https://hy.wikipedia.org - արժեքներ
9. https://hy.wikipedia.org- վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան
10. https://vsu.am grqer/2017 - սովորողների արժեհամակարգի ձևավորումը
11. https://mediamax.am – Դպրոցը և արժեքները
12. https://multiurok.am – Արժեհամակարգը դպրոցում
13. Լ.Թորգոմյան «Մանկավարժության արժեքաբանության հիմունքներ»
14. «Համագործակցային ուսուցում» - Երևան, «Անտարես» 2006